ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄԵՌՆՈՒՄ ԷՐ ՄԱՀԸ...

Մեռնում էր մահը...
Իր արնոտ թաթն էր լիզում յուսահատ...
Հազարալեզու կարմիր բերանով...
Եւ նա ուզում էր ասել դրանով,
Որ ինքն հասել է սեւ մայրամուտին...
Արնոտ էին կարմիր աչքերը նրա,
Արնոտ էին կարմիր ձեռքերը նրա,
Արնոտ էին անգամ խօսքերը նրա...
Տնքում էր մահը...
Մահացու վէրքն էր լիզում կատաղի
Ու մտաբերում անցեալն անտեղի...
Նա ի՞նչ իմանար՝
Օձից խայթուածին՝ օձով են բուժում...
Օ՜, թէ իմանար,
Երբեք չէր ելնի, հասնի Գողգոթա
Ու չէր պայքարի
Մարմին-պատեանում թաքնուած մէկի՝
ԱՆԽՈՐՏԱԿԵԼԻ ՀԶՕՐ ԿԵԱՆՔԻ ՀԵՏ...
Նա ի՞նչ իմանար...
Ու թէ իմանար,
Չէր գանակոծի ԱՍՏԾՈՅ ԳԱՌԻՆ,
Որ յօժարութեամբ ելաւ խաչափայտ
Ու այնտեղ մեռաւ։
Մեռաւ ու թաղուեց։
(Աշխարհը մէկից կարծես խաղաղուեց...)
Ուրախ էր միայն արնախում ՄԱՀԸ...
Սակայն կարճ տեւեց ուրախութիւնն այդ։
Երրորդ օրը դեռ նոր էր սկսուել,
Երբ ԿԵԱՆՔԸ ՅԱՐԵԱՒ...
ԿԵԱՆՔԸ՝ իր ՄԱՀՈՎ
Յաղթեց սեւ մահին՝ մահ տալով նրան...
Թող օրհնեալ լինի անունն այդ ԿԵԱՆՔԻ,
Որին մէկ բառով ասում են ՅԻՍՈՒՍ...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

«Ճանապարհ Դէպի Միրտ»

digitised by A.R.A.R.@